



**ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ,հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 10
ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետը՝ «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել՝ Համալսարանի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանը (կցվում է) (22-09-10-01).

2. Շնորհել անվանական կրթաթոշակներ հետևյալ ուսանողներին (22-09-10-02).

1) Ընդհանուր բժշկության ֆակուլտետ՝

ա. Էլեն Արկադիի Խաչատրյան՝ Բարդուղիմեոս Ֆանարջյանի անվան կրթաթոշակ, 6-րդ կուրս.

բ. Ալիսա Վահանի Պետրոսյան՝ Լևոն Հովհաննիսյանի անվան կրթաթոշակ, 6-րդ կուրս.

գ. Հասմիկ Արմանի Գասպարյան՝ Վահան Արծրունու անվան կրթաթոշակ, 6-րդ կուրս.

դ. Սյուզան Արտակի Հովսեփյան՝ Գրիգոր Արեշյանի անվան կրթաթոշակ, 6-րդ կուրս:

2) Դեղագիտական ֆակուլտետ՝

ա. Ալվարդ Կարենի Նասիբյան՝ Հակոբ Հովհաննիսյանի անվան կրթաթոշակ, 4-րդ կուրս:



3. Հավանություն տալ Համալսարանի հանրակացարանային ֆոնդի ընդլայնման մասին պրոռեկտոր Գ.Ավետիսյանի զեկուցմանը և դիմել հոգաբարձուների խորհրդին՝ զեկուցմամբ առաջարկված լուծմանը, այն է՝ «Միքայելյան» վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող տարածքում հանրակացարանային հատված ստեղծելու նպատակով իր լիազորությունների շրջանակում համապատասխան որոշում ընդունելու առաջարկով (22-09-10-03).

4. Հանրային առողջության ֆակուլտետի «Բուժհաստատությունների կառավարում» մագիստրոսական ծրագրով ուսումնառող հետևյալ ուսանողների ուսման վարձավճարները փոխհատուցել ամբողջությամբ (22-09-10-04)՝

1) Անդրանիկ Գևորգի Համբարձումյան.

2) Սոնա Անդրանիկի Ամյան.

3) Նարոտ Յովսեփի Քեչեպաշյան.

4) Գևորգ Ավետիսի Սիմոնյան:

5. Հաստատել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի արխիվային բաժնի գործունեության կանոնակարգը (կցվում է) (22-09-10-05).

6. Հավանություն տալ Պաթոլոգիայի դեպարտամենտի ստեղծման մասին զեկուցմամբ ներկայացված ճանապարհային քարտեզին և դիմել հոգաբարձուների խորհրդին՝ իր լիազորությունների շրջանակում Պաթոլոգիայի դեպարտամենտի ստեղծման նպատակով համապատասխան որոշումներ ընդունելու առաջարկությամբ (22-09-10-06).

7. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ